Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk **https://www.facebook.com/StYeghiche**

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 19th January 2025 Bulletin 04/2025

First Sunday after Nativity

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 1 ՏԻՄՈԹԷՈՍ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-11

Պօղոս՝ Յիսուս Քրիստոսի առաքեալ մեր Փրկիչ Աստուծոյ եւ մեր յոյսը եղող Քրիստոս Յիսուսի՝ հրամանով,

Տիմոթէոսի՝ հաւատքով հարազատ զաւակիս. շնորհք, ողորմութիւն ու խաղաղութիւն Աստուծմէ՝ մեր Հօրմէն, եւ Քրիստոս Յիսուսէ՝ մեր Տէրոջմէն:

Քեզի աղաչեցի որ Եփեսոս մնաս, երբ ես Մակեդոնիա կ'երթայի, որպէսզի պատուիրես ոմանց՝ ուրիշ կերպով չսորվեցնել, ո՛չ ալ ուշադրութիւն դարձնել առասպելներու եւ անվերջանալի ազգաբանութիւններու, որոնք կը պատճառեն վէճեր՝ փոխանակ Աստուծոյ հաճելի շինութեան, որ կ'ըլլայ հաւատքով: Իսկ պատուէրին վախճանը սէրն է՝ բխած սուրբ սիրտէ, բարի խղճմտանքէ եւ անկեղծ հաւատքէ: Ասոնցմէ վրիպելով՝ ոմանք խոտորեցան փուճ խօսքերու մէջ. կ'ուզեն Օրէնքի վարդապետ ըլլալ, բայց չեն հասկնար ո՛չ ինչ որ կը խօսին, ո՛չ ալ այն բաները՝ որոնց վրայ կը պնդեն:

Սակայն գիտենք թէ Օրէնքը լաւ է, եթէ մէկը գործածէ զայն օրինաւոր կերպով, սա՛ գիտնալով թէ Օրէնքը տրուած է ո՛չ թէ արդարներուն համար, հապա՝ անօրէններուն եւ ըմբոստներուն, ամբարիշտներուն ու մեղաւորներուն, անսուրբերուն եւ սրբապիղծներուն, հայր զարնողներուն, մայր զարնողներուն, մարդասպաններուն, պոռնկողներուն, արուագէտներուն, մարդ գողցողներուն, ստախօսներուն, երդմնազանցներուն, եւ ուրիշ որեւէ բանի համար՝ որ հակառակ է ողջամիտ վարդապետութեան, համաձայն երանելի Աստուծոյ փառաւոր աւետարանին՝ որ վստահուեցաւ ինծի:

The Epistle of St Paul to the 1 Timothy 1:1-11;

Paul, an apostle of Christ Jesus by the command of God our Savior and of Christ Jesus our hope,

To Timothy my true son in the faith: Grace, mercy and peace from God the Father and Christ Jesus our Lord.

Timothy Charged to Oppose False Teachers

As I urged you when I went into Macedonia, stay there in Ephesus so that you may command certain people not to teach false doctrines any longer or to devote themselves to myths and endless genealogies. Such things promote controversial speculations rather than advancing God's work—which is by faith. The goal of this command is love, which comes from a pure heart and a good conscience and a sincere faith. Some have departed from these and have turned to meaningless talk. They want to be teachers of the law, but they do not know what they are talking about or what they so confidently affirm.

We know that the law is good if one uses it properly. We also know that the law is made not for the righteous but for lawbreakers and rebels, the ungodly and sinful, the unholy and irreligious, for those who kill their fathers or mothers, for murderers, for the sexually immoral, for

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

those practicing homosexuality, for slave traders and liars and perjurers—and for whatever else is contrary to the sound doctrine that conforms to the gospel concerning the glory of the blessed God, which he entrusted to me.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ 2:1-11

The wedding at Cana

Երրորդ օրը հարսանիք մը կար Գալիլեայի Կանա քաղաքը, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս ալ հրաւիրուեցաւ այդ հարսանիքին, նաեւ՝ իր աշակերտները: Երբ գինին պակսեցաւ, Յիսուսի մայրը ըսաւ անոր. «Գինի չունին»: Յիսուս ըսաւ անոր. *«Կի՛ն, դուն ի՞նչ ունիս ինծի հետ. իմ ժամս դեռ հասած չէ»:* Իր մայրը ըսաւ սպասարկուներուն. «Ի՛նչ որ ըսէ ձեզի՝ ըրէ՛ք»: Հոն վեց քարէ կարաս դրուած էր՝ Հրեաներուն մաքրուելու սովորութեան համաձայն. իւրաքանչիւրը կը պարունակէր երկու կամ երեք մար: Յիսուս ըսաւ անոնց. *«Լեցուցէ՛ք այդ կարասները ջուրով».* ու լեցուցին զանոնք՝ մինչեւ բերանը: Եւ ըսաւ անոնց. *«Հիմա հանեցէ՛ք ու տարէ՛ք սեղանապետին».* անոնք ալ տարին: Երբ սեղանապետը համտեսեց գինի դարձած ջուրը՝ չէր գիտեր ուրկէ՛ ըլլալը (բայց սպասարկուները՝ որոնք հաներ էին ջուրը՝ գիտէին): Սեղանապետը կանչեց փեսան եւ ըսաւ անոր. «Ամէն մարդ նախ կը մատուցանէ լաւ գինին, ու երբ արբեցած ըլլան՝ ա՛յն ատեն ցածորակը. բայց դուն լաւ գինին պահեցիր մինչեւ հիմա»: Յիսուս իր նշաններուն սկիզբը ըրաւ ասիկա՝ Գալիլեայի Կանա քաղաքին մէջ, եւ ցոյց տուաւ իր փառքը. ու իր աշակերտները հաւատացին իրեն

The Holy Gospel of Jesus Christ according to John 2:1-11

Jesus Changes Water Into Wine

The wedding at Cana

On the third day a wedding took place at Cana in Galilee. Jesus' mother was there, and Jesus and his disciples had also been invited to the wedding. When the wine was gone, Jesus' mother said to him, "They have no more wine."

"Woman, [a] *why do you involve me?"* Jesus replied. *"My hour has not yet come."*

His mother said to the servants, "Do whatever he tells you."

Nearby stood six stone water jars, the kind used by the Jews for ceremonial washing, each holding from twenty to thirty gallons. [b]

Jesus said to the servants, *"Fill the jars with water";* so they filled them to the brim.

Then he told them, *"Now draw some out and take it to the master of the banquet."*

They did so, and the master of the banquet tasted the water that had been turned into wine. He did not realize where it had come from, though the servants who had drawn the water knew. Then he called the bridegroom aside and said, "Everyone brings out the choice wine first and then the cheaper wine after the guests have had too much to drink; but you have saved the best till now."

What Jesus did here in Cana of Galilee was the first of the signs through which he revealed his glory; and his disciples believed in him.

After this he went down to Capernaum with his mother and brothers and his disciples. There they stayed for a few days.

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous in order for us to keep the doors open and provide all the services.

Ս. Անտոն, Տրիփոն, Պարսամ և Ոնոփրիոս ճգնավորներ հիշատակության օր

Քրիստոնեության տարածումից որոշ ժամանակ անց սկսվել է ճգնավորական շարժումը: Ճգնավորներն այն մարդիկ էին, որոնք ամբողջապես նվիրվում էին Աստծուն, հեռանում անմարդաբնակ վայրեր և աղոթքներով ու ծոմապահությամբ, Աստծո շնորհով հաղթահարում մարդկային թուլությունները, հասնում հոգևոր կատարելության: Տարիներ հետո ճգնավորները նաև հրաշագործությամբ և աղոթքներով բժշկելու շնորհ էին ստանում:

Ս. Անտոն Ճգնավորը կամ Ս. Անտոն Անապատականը ճգնավորության և վանական կյանքի հայրն ու հիմնադիրն է: Երանելի այրը ծնվել է Եգիպտոսի Կոմա գյուղում 251 թվականին, ազնվական ծնողների ընտանիքում: Ծնողների մահից հետո Անտոնը ժառանգում է նրանց հարստությունը: Սակայն մի օր եկեղեցում լսում է ավետարանական այն պատգամը, որտեղ Հիսուս ասում է. «Եթե կամենում ես կատարյալ լինել, գնա վաճառիր քո ունեցվածքը ու տուր աղքատներին, և երկնքում գանձեր կունենաս»: (Մատթ. 19:21):

Առաջնորդվելով այս պատվիրանով, Ս. Անտոնը վաճառում է իր ողջ ունեցվածքը և ապրում աղոթքի, պահեցողության ու բարեգործության ոգով: Որոշ ժամանակ անց, նա հեռանում է իր հայրենի գյուղից և բնակություն հաստատում մոտակա քարայրում, որտեղ, ըստ վարքագիրների՝ հոգևոր պատերազմներ է մղում վայրի գազանների կերպարանքով իրեն մշտապես հայտնվող դևերի հետ: Համբերությամբ դիմակայելով բոլոր փորձություններին՝ սուրբը հեռանում է անմարդաբնակ մի անապատ և 20 տարի շարունակ ապրում մենության մեջ:

Լսելով նրա սրբակեցության մասին, շատերը թողնում են իրենց տներն ու հեռանում անապատ ճգնելու: Անսալով իր հոգևոր եղբայրների թախանձանքներին՝ սուրբը ելնում է իր ճգնարանից ու հավաքվածներին բացատրում վանական կանոնները, որոնք և հետագայում դառնում են վանական կյանքի ուղեցույց: Սուրբն իր մահկանացուն է կնքում 105 տարեկանում՝ արժանանալով երկնային անթառամ պսակին, իր աներեր հավատով ու հոգևոր մեծ զորությամբ դառնալով օրինակ բոլոր ժամանակների քրիստոնյաների համար:
Ճգնավորներ են եղել նաև Դեկոս կայսեր օրոք Նիկիա քաղաքում նահատակված Ս. Տրիփոնը, 5-րդ դարի կեսերին Սիրիայի անապատներում բնակվող Ս. Պարսամ ճգնավորը և եգիպտացի ճգնավոր Ս. Ոնոփրիոսը (4-րդ դար): Վերջինս որոշ ժամանակ վանքում մնալուց հետո հեռացել է անապատ, որտեղ ապրել է 60 տարի՝ առանց որևէ մեկին հանդիպելու: Ս. Ոնոփրիոսն այլ ճգնավորների պես աղոթքի ուժով բուժել է շատերին և փրկել տառապանքներից: Այդ պատճառով էլ հատկապես այս սրբին են աղոթքով դիմում երեխաներին բժշկելու և ծանր ծննդաբերության ժամանակ:

Հայ Առաքելական եկեղեցին առանձնահատուկ կարևորում է ճգնավորներներին և ունի նրանց հիշատակին նվիրված տոներ:

Commemoration of St. Anton the Hermit

Sometime after the spreading of Christianity the hermits' movement started. Hermits were those persons who devoted themselves to God, went to uninhabited places and deserts and spent their life there praying and fasting. Thus, by God's will they overcame the human faults and attained spiritual perfection. After many years of ascetic life the hermits were granted the grace of working wonders and healing the sick by means of prayers.

St. Anton the Hermit is the founder of ascetic and monastic life. He was born in the village Koma, Egypt, in 251, in a noble family. After his parents' death Anton inherited their wealth. Once in the church he listened the evangelical commandment, in which Jesus says: "If you want to be perfect, go and sell all you have and give the money to the poor, and you will have riches in heaven; then come and follow me." (Mt 19:21). Being led by this commandment, Anton sold all of his property and lived in the spirit of praying, fasting and doing charity. After some time he left his native village and began to live in a cave, where according the hagiographers he struggled against the demons and devils who constantly appeared to him in the appearance of wild beasts. Patiently facing all temptations the saint left for a desert and lived there completely isolated for 20 years. Becoming aware of his ascetic and secluded life, many people left their houses and went the desert to live ascetic life. Upon the request of his spiritual brothers St. Anton came out of his cave and explained the assembled people monastic cannons and rules, which later became the guideline for monastic life. The saint passed away at the age of 105.

3: This week's message from our Priest in Charge

<u>Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.</u>
Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելիներ ի Քրիստոս

«Քանզի պատուիրանի գլխաւորը սէրն է՝ բխած սուրբ սրտից, բարի խղճմտանքից եւ անկեղծ հաւատից» (Ա. Տիմ. 1.5)

Աստծոյ եւ մարդու միջեւ սիրոյ այն յարաբերութիւնը, որ եղաւ Աստուածորդու մարդանալուց հետո, բոլոր ժամանակների եւ բոլոր հասարակութիւնների համար մնաց բացառիկ, հիացնող եւ նորանոր հոգիներ դէպ իրէն ձգող: Սիրոյ փրկչական պատուիրանը առաջին իսկ օրից կեանք եւ ապրում եղաւ՝ Իր օրինակով ոգեշնչելով բոլոր քրիստոնեաներին: Քրիստոսի Ծնունդը, Մկրտութիւնը, կամաւոր Չարչարանքներն ու Խաչելութիւնը, Թաղումը, դժոխքում քարոզելն ու Յարութիւնը մարդու նկատմամբ Աստծոյ սիրոյ խոստովանութիւններ: Աւետարանի ամէնադրամատիկ եւ յուզական դրուագներից մէկը Քրիստոսի աղօթքն է Գեթսեմանիի պարտեզի մէջ: Այստեղ Քրիստոսի տիեզերական սիրոյ բարեխօսութիւնն է, որ երեւում է ոչ միայն առաքեալների նկատմամբ. «Միայն նրանց համար չէ, որ աղաչում եմ, այլեւ նրանց խօսքի միջոցով բոլոր ինձ հաւատացողների համար, որպէսզի ամէնքը մի լինեն. ինչպէս դու, Հա՛յր, իմ մէջ, եւ ես՝ քո մէջ, որպէսզի նրանք էլ մեր մէջ լինեն» (Յովհ. 17. 20-21): Սա բոլոր ժամանակների քրիստոնեաների՝ մէկ ընտանիքի մէջ լինելու եւ Հօր խնամքն ունենալու աստուածային սիրոյ արտայայտութիւն է:

Քրիստոնեայի սէրը փոխադարձ սէր է՝ Աստծուց օրինակ վերցուած: Մենք սիրել սովորում ենք Քրիստոսից եւ Իր սէրը դէպի մեզ ջանում վերադարձնել ոչ միայն Իրէն սիրելով, այլեւ ուրիշների, անգամ մեզ չը սիրողների համար: Դրա լաւագոյն արտայայտութիւնը Քրիստոսի Եկեղեցու մէջ ամենօրեայ աղօթական կարգն է բոլոր քրիստոնեաների՝ Աստծոյ պաշտօնեաների, մեր ծնողներին, ուսուցիչ-վարդապետներին, քոյր-եղբայրներին, ընկերների, կերակրողների, ուխտաւորների, ճանապարհորդների, աշխատաւորների, խոստովանողների եւ ապաշխարողների, գերիների, հիւանդների մեղաւորների, պանդուխտների, նեղեալների, իշխանաւորների, բարիք գործողների, թշնամիների եւ ատելիների համար: Եկեղեցին իր բոլոր անդամների համար է աղօթում հանապազ: Իսկ Եկեղեցու մէջ ոչ միայն ողջ մարդիկ են, այլեւ ննջեցեալները: Սա գեղեցիկ կերպով արտայայտւում է Տաղաւար տօների յաջորդ օրերի Ննջեցելոց կամ մեռելոց յիշատակութեան պատարագներով եւ գերեզմանների օրհնութեամբ, քանզի այդ տօնը ողջերով տօնելուց յետոյ յաջորդ օրը գնում ենք մեր ննջեցեալ հարազատներին Աւետիս փոխանցելու, յարութեան յոյսի մէջ զօրանալու եւ զօրացնելու: Չէ՞ որ մենք ամէնքս Քրիստոսի մէջ ենք եւ Քրիստոս մեր մէջ:

Եկեղեցին չի աղօթում հեթանոս, հերետիկոս եւ անհաւատ մահացածների համար, ովքեր մերժել են Քրիստոսին կամ Իր խօսքերը: Իսկ ի Քրիստոս ննջողների համար էլ ներելի սխալների համար է քաւութիւն եւ թողութիւն հայցում, եւ ոչ մահու չափ մեղքերի: Այս է Եկեղեցու ներսում սիրոյ գեղեցիկ փորձառութիւնը, որ ինչպէս մենք կարող ենք միմեանց համար աղօթել եւ աղօթք խնդրել, այդպէս էլ ննջեցեալ քրիստոնեաներն են աղօթում մեզ համար եւ ակնկալում մեր աղօթքները: Իւրաքանչիւր պատարագ կատարւում է ի յիշատակ Աստծուն հաւատացած եւ հաւատացող բոլոր մարդկանց համար՝ ե՛ւ ննջեցեալների, ե՛ւ ողջերի: Քահանայական ձեռնադրութեան մէջ եպիսկոպոսը, տալով սուրբ սկիհը քահանայացու ընծայուողի ձեռքը, ասում է. «Առ քեզ սկիհ, պատարագելոյ վասն կենդանեաց եւ վասն մեռելոց»: Այս է սիրոյ սկզբունքը, քանի որ աղօթքը սիրոյ արտայայտութիւն է, սէր, որին մահն անգամ չի կարող արգելք լինել:

Անգամ Հին Կտակարանում ննջեցեալների համար պատուիրող պատարագի օրինակ կարող ենք տեսնել Մակաբայեցիների Բ. Գրքի մէջ, ուր Յուդա Մակաբէն ճակատամարտում ընկածների համար դրամ հաւաքելով «տուեց, որ տանեն, Երուսաղէմում զոհեր մատուցեն կատարուած մեղքերի համար: Դա խիստ իմաստուն քայլ էր, որովհետեւ ինչ որ անում էր, մեռեալների յարութեան մասին մտահոգուելով էր անում: Եթէ պատերազմում ընկածների յարութեան ակնկալութիւն չունենար, զուր կը լինէր մեռեալների համար աղօթք մատուցելը» (Բ. Մկբ. 12.43):

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

Մեր Եկեղեցու դաւանութիւնն ու ընկալումն այն է, որ բոլոր ննջեցեալները հոգիների կայաններում են սպասում Քրիստոսի Բ. Գալուստին, երբ պիտի լինի մեռեալների յարութիւնը եւ ընդհանրական դատաստանը: Դրա համար խնդրում ենք, որ Տիրոջ դատաստանը քաղցր լինի նրանց նկատմամբ՝ իրենց անունով Աստծուն հաճելի մատաղներ, ողորմութիւններ եւ բարեգործություններ կատարելով եւ աղօթելով. «Քրիստոս, անոխակալ եւ բարեգութ Աստծոյ Որդի, Քո արարչական սիրով զթա բոլոր յանգուցեալ հոգիներին, հաւատով ի Քեզ ննջածներին, յիշիր նրանց Քո Արքայութեան գալստեան մեծ օրը, արժանի արա ողորմութեան, մեղքերի քաւութեան եւ թողութեան, Քո աջակողմը դասաւորելով պայծառացրու նրանց Քո սուրբերի հետ, քանզի Դու ես Տէրն ու Արարիչը բոլորի, Դատաւորը ողջերի եւ մեռեալների, եւ Քեզ են վայել փառքը, իշխանութիւնն ու պատիւը այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն»:

Արդարների յիշատակն օրհնութեամբ թող լինի, եւ մեզ էլ Տէր Յիսուս առաջնորդի առաքինի կեանքի, բարի գործերի եւ զօրաւոր սուրբերի բարեխօսութեամբ արժանացնի կեանքի յարութեան: Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

<u>DAILY BIBLE READINGS FOR 2024</u> <u>According to the Lectionary of the Armenian Apostolic Church</u>

20 January	Sts. Theodosius the King and the Holy Children of Ephesus Wisdom 6:2-10; Jeremiah 45:1-2; 1 Timothy 2:1-7; Luke 7:1-10
21 January	Giragos and his mother Julita, and the Martyrs Gordius, Polyeuctus, and Grigoris Proverbs 14:1-6; Zechariah 8:4-5; Isaiah 60:8-9; Hebrews 2:14-18; Luke 9:44-48
22 January	1 Timothy 5:17-6:5; John 3:22-36
23 January	St. Vahan of Koghtûn, and Eugenia the Virgin, and her Father Philip and Mother Claudia, and her Brothers Sergius and Apito, and the two Eunuchs Proverbs 7:1-7; Ezekiel 12:17-19; Romans 8:12-27; Luke 9:23-27
24 January	2 Timothy 2:3-14; John 5:31-47
25 January	Holy Fathers Sts. Athanasius and Cyril Proverbs 11:2-11; Isaiah 61:3-7; Hebrews 13:7-9; John 16:33-17:8

Dear Parishioners
and
Armenian Community Members

The St Yeghiche Armenian Church's 2025 year calendar is out, with both Armenian Religious Feast dates and UK holiday dates.

These are available at St Yeghiche Armenian Church front desk,
from Sunday 1st December 2024,
and till the stock last.

These are great gift idea for New Year
To give to your friends and relatives.

We encourage every Armenian Household to have one, and bring our Lords blessing to your home and Family.

Thank you for your generous support
St Yeghiche Armenian Church Parish Council

Divine Liturgy with Archbishop Haigazoun Najarian
at
St. Yeghiche Armenian Church

With the blessing of our Primate, His Grace Bishop Hovakim Manukyan, we are honoured to invite you to a special Divine Liturgy at St. Yeghiche Armenian Church, celebrated by His Eminence Archbishop Haigazoun Najarian, Primate of the Armenian Diocese of Australia and New Zealand and Pontifical Legate to the Far East.

Event Details:
Date: Sunday, January 19, 2025
Time: 10:30 AM

Location: St. Yeghiche Church, 13b Cranley Gardens, London SW7 3BB

Archbishop Najarian was born in Aleppo, Syria, and his spiritual journey is deeply connected to the UK. He completed his theological studies at St. Augustine of Canterbury School (1974-1975) and earned a Bachelor of Divinity in Theology from King's College London in 1978. He further pursued studies at St. Andrews School in Scotland (1978-1979). During this period, he was ordained as a celibate priest at St. Sarkis Church in London in 1975 and later served as the spiritual pastor of St. Peter’s Armenian Church in London from 1979 to 1981.

Since 2013, he has served as Primate of the Armenian Diocese of Australia and New Zealand and has been appointed Pontifical Legate to the Far East, overseeing Armenian communities across Asia.

This visit marks a significant return to the community where he began his pastoral journey, and we warmly invite all faithful to join us for this spiritually enriching event and receive Archbishop Najarian's blessings.

For more information, please contact the church office at [insert contact information].
St. Yeghiche Church is committed to ensuring a safe environment for all attendees. Please adhere to any health and safety guidelines in place at the time of the event.

We look forward to welcoming you to this special occasion.

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By the Armenian Community of Great Britain and Republic of Ireland for the soul of their **Compatriots of Artsakh and Armenia** who fell victims of pogroms and ethnic cleansing in Sumgait, Baku and other cities of Azerbaijan.

By Mrs Perouz Vartanian, Mr and Mrs Shiraz & Lorig Vartanian and Family, Mr and Mrs Ronnie & Anoushka Sarkisian and Family, Mrs Shnor Karakelian and Mrs Valentine Kazanjian & Families for the soul of their Husband who was also a loving Father, Brother and Grandfather the late **HAIG VARTANIAN** on the 1st anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the **VARTANIAN** and **SARKISIAN** Families.

By Mrs Jasmine (Hasmik) Toomassian and Family for the soul of their Brother who was also a loving Uncle the late **Dr VAHIK TOOMASSIAN** on the 4th anniversary of his passing, also for all the old and new deceased members of **TOOMASSIAN** Family.

By Jacqueline, Setrag, Luciné and Zora Karanfilian, for the souls of their beloved Parents/ Grandparents, the late **HOVSEP** and **NELLY HOVSEPIAN**, for their Grandparents/Great-Grandparents, the late **ASHOT** and **SIRAN AFTANDILIAN** and also for all the old and new deceased members of the **HOVSEPIAN**, **AFTANDILIAN** and **KARANFILIAN** Families.

By Harry Tateossian for the soul of his parents the late **MINAS** and **NEVRIK TATEOSSIAN**, also for all the old and new deceased members of **TATEOSSIAN** Family.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.

Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk